ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ամենապատիւ Տ. Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոսը իւր շնորհակալութիւնն է յայտնում և օրհնութիւնն ուղարկում այն բոլոր անձանց և հաստատութիւններին, որոնք Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ տօնի առթիւ շնորհաւորական հեռագիրներ էին ուղարկել Նորին Ամենապատուութեան:

Ս. Յարութեան կիւրակէին հանդիսաւոր պատարագ մատոյց Ամենապատիւ Տ. Տեղակալ Գէորգ Արքեպիսկոպոսը: Պատարագին երգում էր ձեմարանի բառաձայն խումբը Հ. Կոմիտասի դեկավարութեամբ:

Մարտի 29-ին Յարութեան կիւրակէն պատարագից յետոյ ս. Էջմիածնի միաբանութիւնը Մեսրոպը և Սուքիաս արքեպիսկոպոսների գլխաւորութեամբ Ներկայացան Նորին Ամենապատուութեան Տ. Տեղակալին և շնորհաւորութիւններ մատուցին Հրաշափառ Յարութեան տօնի առթիւ:

Միաբանութիւնից յետոյ Ներկայացան Նորին

Ամենապատուութեան Վաղարշապատի դաւառապետը և հասարակութեան պատուաւոր անձինք։

1908 թուականի ընթացքում Մայր Աթոռի դեղատանը ընդունուած են երթ և իկ հիւանդներ՝

Ծղամարդ	1410
Կանայք	614
Երեխաներ	636
Ընդամենը	2660,

Այս հիւանդներից եղել են 1680 հոգի բռնուած վարակիչ հիւանդութիւններով։

Բժ. Տեր Խաչատուրեանց